

ՀՏԴ՝ 81՝02

DOI:10.52971/18294316-2023.26.1-192

ԼԻԱԿԱՏԱՐ ԱՐՄԱՏԱԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ  
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ՈՐՊԵՍ ԲԱՐՁՐ ՈՃԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ  
(Ըստ Աստվածաշնչի թարգմանական գրքերի)

*Հայկե Մ. Խաչատրյան*

Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների  
լաբորատորիա, Երևան, ՀՀ

**Ամփոփում**

*Նախաբան.* Կրկնության կաղապարներով ստեղծված բարդությունները հին հայերենի բառային կազմի անքակտելի մասն են կազմում և լայն գործածություն են ունեցել Աստվածաշնչի թարգմանական գրքերում: Սուրբ գրքում հանդիպում են անկախ արմատներով ձևավորված մի շարք կրկնավոր բարդություններ, որոնք որոշակի հաճախականությամբ գործածվել են նաև հինգերորդ դարի մատենագրական հուշարձաններում: *Մեթոդներ և նյութեր.* Ուսումնասիրությունը կատարվել է պատմահամեմատական մեթոդի համաժամանակյա ուսումնասիրության եղանակով: *Վերլուծություն.* Աշխատանքում գուգահեռներ են տարվում Աստվածաշնչի և հինգերորդ դարի պատմիչների երկերի միջև՝ պարզելու կրկնավոր բարդությունների գործառական հաճախականությունը: *Արդյունքներ.* Կրկնավոր բարդությունների գործառական արժեքի բացահայտումն ունի ոճագիտական կարևոր նշանակություն, քանի որ, ըստ այդմ, հնարավոր է պարզել Աստվածաշնչի և պատմագրական երկերի ոճական տիպերի տարբերությունները՝ ցույց տալով, որ Աստվածաշնչի լեզուն պատկանում է առավել բարձր ոճի դասին: Մյուս կողմից՝ հարկ է նշել, որ հինհայերենյան կրկնավոր բարդությունները դարձել են սերիչ կաղապարներ որոշակի նորակազմությունների համար, որոնք հին հայերենի բառային կազմի հետ փոխանցվել են արդի հայերենին:

**Բանալի բառեր՝** *Աստվածաշունչ, արմատակրկնություն, բառագիտություն, անկախ արմատ, կաղապար, համադրական բարդություն, բարձր ոճ, նախագրային հայերեն, հին հայերեն:*

Ինչպես հղել՝ Խաչատրյան Լ. Լիակատար արմատակրկնությունը հինգերորդ դարի հայերենում որպես բարձր ոճի դրսևորում // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. I (26): 192-202 էջեր: DOI:10.52971/18294316-2023.26.1-192

**ABSOLUTE REDUPLICATION IN THE FIFTH CENTURY ARMENIAN  
AS A MANIFESTATION OF HIGH STYLE  
(According to Bible translation books)**

*Lalik M. Khachatryan*

Linguistics Research Laboratory after Kh. Abovyan ASPU, Yerevan, RA

**Abstract**

*Introduction:* The complications created by patterns of reduplication are an integral part of the vocabulary of Old Armenian and were widely used in translation books of the Bible. There are a number of reduplications in the Holy book, formed by independent roots, which, with a certain frequency were also used in the bibliographical monuments of the fifth century. *Methods:* The study has been carried out by synchronic research of the historical-comparative method. *Analysis:* This paper draws parallels between the Bible and the works of the 5th century historians to identify the functional frequency of reduplications. The discovery of the functional value of reduplications has a stylistic importance, as, due to it, it is possible to find out the differences between the stylistic types of the Bible and historical works, showing that the language of the Bible belongs to a higher style class. *Results:* The reduplications of Old Armenian have become derivative patterns for certain new formations, that have been transferred to Modern Armenian with the vocabulary of Old Armenian.

**Key words:** *Bible, reduplication, lexicography, independent root, pattern, synthetic complexity, high style, Prescriptive Armenian, Old Armenian.*

**Citation.** Khachatryan L. Absolute reduplication in the fifth century Armenian as a manifestation of high style. // “Scientific Works” of SCAS NAS RA. Gyumri, 2023 . V. I(26). 192-202 pp.

DOI: 10.52971/18294316-2023.26.1-192

**ПОЛНАЯ РЕДУПЛИКАЦИЯ В ПЯТОМ ВЕКЕ АРМЯНСКОГО  
ЯЗЫКА КАК ПРОЯВЛЕНИЕ ВЫСОКОГО СТИЛЯ  
(На основе переведенных книг Библии)**

*Լալիկ Մ. Խաչատրյան*

Лаборатория лингвистических исследований АГПУ им. Х. Абовяна, Ереван, РА

**Аннотация**

*Предисловие:* Редупликация, созданные закономерностями повторения, являются неотъемлемой частью лексики древнеармянского языка и широко использовались в переводных книгах Библии. В священной книге имеется ряд повторных редупликаций, образованных независимыми корнями, которые с определенной периодичностью употреблялись и в библиографических памятниках V века. *Методы:* Исследование проводилось приемом синхронного изучения историко-сравнительного метода. *Анализ:* В статье проводятся параллели

между Библией и трудами историков пятого века, чтобы выявить функциональную частоту повторяющихся осложнений. *Результаты:* Открытие функционального значения повторяющихся сложностей имеет стилистическое значение, так как по нему можно выяснить различия между стилистическими типами Библии и исторических сочинений, показывая принадлежность языка Библии к классу высокого стиля. С другой стороны, стоит отметить, что повторяющиеся сложности древнеармянского языка стали шаблонами распространения для определенных образований, которые были заменены лексикой древнеармянского на современный армянский.

**Ключевые слова:** Библия, корневой повтор, лексикография, самостоятельный корень, образец, синтетическая сложность, высокий стиль, дописьменный армянский язык, древнеармянский язык.

**Как цитировать.** Хачатрян Л. Полная редубликация в пятом веке армянского языка как проявление высокого стиля. //“Научные труды”» ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 1(26). 192-202 сс.. DOI: 10.52971/18294316-2023.26.1-192

**ՆԱԽԱԲԱՆ.** Արմատակրկնությունը (ռեդուբլիկացիան) բառակազմության եղանակ է, որի դեպքում բարդ բառեր են կազմվում միևնույն արմատի կրկնությամբ: Ընդհանուր հայերենի բառային կազմում որոշակի շերտ են կազմում կրկնավոր բարդությունները, որոնք լայն գործածություն են ունեցել ինչպես Աստվածաշնչի թարգմանական գրքերում, այնպես էլ հինգերորդ դարի մատենագրական հուշարձաններում:

Ա.Բագրատունին իր աշխատանքի «Յաղագս բարդութեան բառից» գլխում, քննելով արմատակրկնությամբ առաջացած բարդությունների տեսակները, նկատում է. «Այսպես երբեմն մի եւ նոյն անուն բարդեալ գտանի ինքն ինքեամբ. պէսպէս, վաղվաղ, վազվազ, բաղբաղայք, բեկբեկ, ծործոր, լուռլուռ» [7, էջ 660]:

Էդ. Աղայանը նկատում է, որ կրկնական բարդությունների բաղադրիչները պարզապես կրկնվող բառն ինքն է՝ ամբողջությամբ կամ մի մասով միայն, բառակրկնությունները ունեն կրկնության եզրեր կամ մասեր, որոնց միավորումով էլ կազմվում են կցական բնույթի կրկնական բարդությունները» [4, էջեր 275-276]:

Գ. Ջահուկյանն այն տեսակետն է հայտնում, որ կրկնավոր բարդություններն առաջացել են ժամանակագրական տարբեր փուլերում՝ հնդեվրոպական և հետհնդեվրոպական շրջաններում (թիթեռ, բողբոջ, տրտունջ, գրգիռ, թրթրռ. . .), հնագույն և հին շրջաններում (հետզհետե, մերթընդմերթ. . .) և ներկայանում են ձևակազմական տարբեր կաղապարներով [10, էջ 215]: Ըստ Հր. Աճառյանի՝ հայերենի կրկնավորների թիվը հասնում է շուրջ 500-ի [2, էջեր 83-93]:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Աստվածաշունչ մատյանը հայերեն առաջին (թարգմանական) աշխատանքն է՝ մեզ հետաքրքրում է հարցադրումների հետևյալ շրջանակը. հնագույն շրջանից ավանդված կրկնավոր բարդությունները ինչպիսի՞ գործածություն են ունեցել Աստվածաշնչի թարգմանական գրքերում, ոճական ի՞նչ արժեք ունեն, մյուս կողմից՝ ինչպիսի՞ն է կրկնավոր բարդությունների գործառական հարաբերակցությունը Աստվածաշնչում և հինգերորդ դարի պատմիչների աշխատություններում [6]:

Աստվածաշնչի լեզվին անդրադառնալիս հայագետները նկատել են, որ այն «մեր հին գրականության համար դարձել է կլասիկական իր քերականությամբ, իր բառերով ու դարձվածքներով, պատկերավոր ասացվածքներով ու բանաձևերով» [1, էջ 108], «ունի իր պատշաճ լեզվաոճական մակարդակը» [5, էջ 10]: Ն. Բուզանդացին, հինգերորդ դարի ոճերն առանձնացնելիս, Աստվածաշունչ մատյանը գետեղում է *Եզնիկյան դասի մեջ* [3, էջ 77], որ աչքի է ընկնում բառերի ընտրությամբ, ներդաշնակ շարադասությամբ, հարուստ դարձվածքներով, ասացվածքներով, հոմանիշներով, ճարտասանական միջոցներով [9, էջ 68]:

Աստվածաշնչում գործածված կրկնավոր բարդությունները հիմնականում ներմուծել են թարգմանիչները. Ս. Գրքի հունարեն բնագրում, նրանից թարգմանված լատիներեն, գերմաներեն, անգլերեն և հին ռուսերեն տարբերակներում կրկնավոր բարդությունները, հայերենի հետ համեմատած, խիստ նվազ տոկոս են կազմում կամ գրեթե չեն հանդիպում<sup>1</sup>:

Աստվածաշնչում գործածված համադրական կրկնավոր բարդությունները հանդես են գալիս երկու կարգի կադապարով. անկախ արմատներով (այլայլել, մեծամեծ, գոյնագոյն, գունդագունդ և այլն), որ կոչվում է *լիակատար արմատակրկնություն*, և կախյալ արմատներով (գրգռել, արհամարհել, խարխափել, ծանծաղ, պապանձիլ և այլն), որ կոչվում է *մասնակի արմատակրկնություն* [11, էջեր 168-170: 8, էջեր 124-141]:

Մույն հոդվածում կանոնադաշտնաք *անկախ արմատներով* ձևավորված համադրական կրկնավոր բարդություններին (լիակատար արմատակրկնությանը)<sup>2</sup>:

**Այլայլել** կրկնավոր բարդությունը Աստվածաշնչում ունի եզակի գործածություն՝ «այլագունել, սփրթնել» նշանակություններով, ինչպես՝ *Այլայլեսցէ* գերեսս իր յոգուոց հանելով, այլ ոչ եւս տեսանել զքեզ կենդանի (Միքաք, ԺԲ, 19):

Հանդիպում է միայն Բուզանդի երկում. Մուրբ ուխտն *այլայլեսցի* (Բուզ., 23):

<sup>1</sup> Մենք այս տեսակետին հանգել ենք՝ ուսումնասիրելով արմատակրկնության (ռեդուբլիկացիայի) իրողությունը հին հայերենում և նրա համարժեքները ռոմանագերմանական լեզուներում և հին ռուսերենում՝ ըստ Աստվածաշնչի թարգմանական գրքերի: Մեր ասածը հաստատելու համար վկայենք մեկ օրինակ՝ սուրբգրային նույն նախադասությունը դիտարկելով վերոնշյալ լեզուներում:

Եւ արար Աստուած գերկուս լուսնաւորսն *զմեծամեծ* (Օնն., Ա.16):

Հին հունարենում, լատիներենում, գերմաներենում, անգլերենում և հին ռուսերենում *մեծամեծ* կրկնավոր բարդության իմաստն արտահայտվել է *մեծ* ածականի դրական աստիճանով (*μεγάλος*, *magna*, *grosse*, *great*, *великая*). հմմտ. *Καὶ ἐποίησεν ὁ θεὸς τοὺς δύο φωστῆρας τοὺς μεγάλους* (Դեւեօս, 1, 16). *Fecitque Deus duo magna luminaria* (Gen., 1, 16). *Und Gott machte zwei grosse Lichter* (Gen., 1, 16). *And God made two great lights* (Genes., 1;16). *И сотвори Богъ два свѣтила великая* (Бытiе, 1, 16).

Վերոբերյալ հատվածում միայն հին հայերենում է գործածվել կրկնավոր բարդություն (մեծամեծ):

<sup>2</sup> Աստվածաշնչի վերլուծական կրկնավորներն առանձին ուսումնասիրության առարկա կարող են դառնալ:

**Գեշագեշ** կրկնավոր բարդությունը «պատառ-պատառ, ծվեն-ծվեն, բզկտելով» իմաստներով գործածվել է Աստվածաշնչում մեկ անգամ. Մանր մանր կոտորեալ, զայս թռչնոց *գեշագեշ* ջամբեցից (Բ. Մակ., ԺԵ, 33):

Որևէ պատմիչի երկում չի հանդիպում:

**Գոյնագոյն** բարդությունը Աստվածաշնչում գործածվել է հետևյալ իմաստներով. 1. «գեղեցիկ գույնով, բազմագույն, բազմերանգ, երփներանգ». Եւ ի *գոյնագոյն* ծաղիկս պսակեալք ուրախութեամբ (Գ. Մակ, Է, 11): 2. «Տեսակ-տեսակ». Կային գահոյք՝ լցեալս պատառոք եւ *գունագոյն* նկարուք (Եսթ., Ա, 6) :

Կրկնավոր բարդությունը հանդիպում է Կորյունի և Ազաթանգեղոսի երկերում՝ Ջերկիր զարդարէ ի *գունագոյն* երանգս (Ազաթ., 140): Որոյ սպասս *գունագոյնս* ... պատարաստեալ (Կոր., 94):

**Գունդագունդ** կրկնավոր բարդությունը նշանակում է՝ 1. «խմբերի բաժանված, հոծ խմբերով, շարք-շարք». Եւ այլ եւս կանայք մեծամեծք տեղեացն գային *գունդագունդք* գովէ՛լ զնա (Յուդիթ, ԺԵ, 15): 2. «Առատորեն, փխբ. աղբյուրի պես». Մինչեւ արիւնն *գունդագունդ* արտաքս հոսէր եւ վերքն չարաչար պատառեալ էին (Բ Մակ., ԺԴ, 45):

Հանդիպում է միայն Ազաթանգեղոսի և Եղիշեի երկերում. Հեղեալ ի վերայ դասադաս *գունդագունդ* սրբոց մարգարէիցն (Ազաթ., 170): Շարժեա՛ն և դողացո՛ւ *գունդագունդ* բազմութիւն անօրինացս (Եղ., 76),

**Դասադաս** - Աստվածաշնչում ունի եզակի գործածություն՝ «խումբ-խումբ» իմաստով, ինչպես՝ Դարձեալ յապարանիցն *դասադաս* մտանէին ի յամաշխարհ խնդրուած (Բ. Մակ. , Գ, 18):

Հանդիպում է միայն Ազաթանգեղոսի երկում. Հեղեալ ի վերայ *դասադաս* գունդագունդ սրբոց մարգարէիցն (Ազաթ.,170):

**Դարձադարձ** կրկնավոր բարդությունն արտահայտում է բազմապատիկության իմաստ՝ «կրկին՝ վերստին հետ դառնալը, վերադարձ»: Աստվածաշնչում ունի եզակի կիրառություն. Մատաղամարքն՝ մանկամբքն հանդերձ ... ընդ անդաստանս առանց *դարձադարձի* աւագամեծար տաճար անդր պնդեալ ժողովէին (Գ. Մակ., Ա. 11):

Որևէ պատմիչի երկում չի հանդիպում:

**Խորխորատ** բարդությունը գրաբարում բազմիմաստ է. նշանակում է՝ 1. «Խոր փոս, վիհ, գուբ». Առ իջեալսն ի *խորխորատ*՝ ի ջուրց վայելչութեան (Եզեկ., ԼԲ, 19): 2. փխբ. «Գերեզման. դժոխք». Ի վախճանի *խորխորատ* դժոխոց (Միրաք, ԻԱ, 11): Եւ իջուցիք զքեզ առ իջեալսն ի *խորխորատ* առ ժողովն յախտենից (Եզեկ. , ԻԶ, 20):

Հանդիպում է Եղիշեի, Բուզանդի և Եզնիկի աշխատություններում. Ընկեցին զմարմինն ի *խորխորատ* մի ցամաք (Եղ., 169): Աջօք բացօք անկաք ի *խորխորատ* (Բուզ., 145): Խեղդ ընդ անձն արկեալ՝ ձգեն զնոսա ի *խորխորատ* (Եզն., 116):

Հինգերորդ դարում *խորխորատ* բառի իմաստով գործածվում են նրա հոմանշային շարքի անդամները: Հմմտ. Եւ աղմկեալ ի ցնորից իմն խելագարանաց, ընդ վայր յածելով երիվարան՝ անկանի ի *խոր* իմն մեծ (Խոր., 191): Իսկ իբրև նեխեցաւ դի նորա՝ հրամայէ ընկենուլ ի *վիհ* մեծ (Խոր., 50): Ետու հրաման՝ ելթանասուն զնոսա ի մի *գուր*

փողոտել (Բուգ., 140): Ջորով շրջափակեալ խոր *փոսի*՝ անդնդալիբ հաստատեաց զհիմունսն պատուարին (Խոր., 339):

**Կորակոր** բարդությունը նշանակում է՝ 1. «իսպառ կորացած, կորագլուխ, գլխահակ». ինչպես՝ Եւ պատառեաց զպատմուճան իւր . . . եւ զգեցաւ քուրձ ի վերայ մարմնոյ իւրոյ ... եւ գնայր *կորակոր* (Գ. Թագ., ԲԱ, 27): Եւ փորեցի ընդ երեկոյս զորմն ձեռամբ իմով եւ երթայի գաղտագողի *կորակոր* առաջի նոցա (Եզեկ., ԺԲ, 7): 2. «Ամոթահար եղած, խայտառակված». Եւ ինքն Լիւսիաս կորակոր փախուցեալ մագապուր լինէր ( Բ. Մակ., ԺԱ, 12):

Հանդիպում է միայն Եղիշեի երկում. Յարեւելից պատերազմէն *կորակոր* և ոչ բարձրագլուխ էր դարձեալ (Եղ., 82)<sup>3</sup>:

**Հեծեծեմ** բարդությունը նշանակում է «վշտից հառաչանքներ արձակել». Որք ի քաղաքաց և ի տանց իւրեանց զրկեցան, անձինք տղայոց մեծամեծս *հեծեծեցին* (Յովբ. ԻԴ, 12): 2. «Հոգոց հանել, ախ ու վախ քաշել». Եթէ ասիցեմ եթէ խօսեցայց՝ մոռանամ, զերեսս ի վայր անկեալ *հեծեծեցից* (Յովբ, Թ, 27):

Հանդիպում է Ագաթանգեղոսի և Եղիշեի աշխատություններում. Ոչ ոք *հեծեծելով* հառաչէր ի վերայ մերձաւոր սիրելեաց իւրոց (Եղ., 125): Յորժամ *հեծեծեցես*՝ յայնժամ կեցցես (Ագաթ., 150)<sup>4</sup>:

**Հեղեղ** բարդությունը հին հայերենում նշանակում է՝ 1. «ջրի հորդ հոսանք՝ վարարում». Իմաստնոց զիտութիւն որպէս *հեղեղ* յորդեցէ եւ որպէս բղիտումն աղբեր (Սիրարք., ԲԱ. 16): Եւ ի ջուրցն *հեղեղէ* առ Նոյի (Եսայ., ԾԴ, 9): 2. «Ջրհեղեղ». Եւ քաղաքն եւ սրբութիւնն ապականեսցին առաջնորդան հանդերձ . . . եւ ջնջեսցին *հեղեղաւ* (Դանի., Թ, 26):

*Հեղեղ* կրկնավոր բարդությունը սերող հիմք է դարձել նորակազմությունների համար՝ *հեղեղատ, հեղեղատել*, որոնք գործածվել են Աստվածաշնչում, ինչպես՝

*Հեղեղատ* - «հեղեղի բացած հուն, ցամաքող հեղեղի կամ գետի հուն, ձոր». Ելանէ ի վեր ի պարիսպն առ *հեղեղատան* (Նէեմ., Բ, 13): Ցամաքեցաւ *հեղեղատն*, զի ոչ եղև անձրև (Գ. Թագ., ԺԵ, 7): *Հեղեղատել* - «հեղեղի պես ողողել, հեղեղի ջրով ծածկել, հոսանքով քշել-տանել». Եւ որդիք նորա ժողովեցեն ամբոխ զօրաց բազմաց եւ մտցէ դիմեալ եւ *հեղեղատեցէ* (Դանի., ԺԱ, 10): Բազուկք այնր, որ *հեղեղատիցեն* եւ *հեղեղատեսցին* յերեսաց նորա (Դանի., ԺԱ, 22):

Հանդիպում է Խորենացու, Ագաթանգեղոսի և Եղիշեի աշխատություններում: *Ջհեղեղն* ... ի բաց անցուցէ (Ագաթ., 280): Բազում վտակս արեան հեղեալ զերկիրն ռոռգանէին իբրև *հեղեղօք* անձրևաց (Խոր., 107): Ուր ոչ անձրևք իջանեն և ոչ հողմք շնչեն և ոչ *հեղեղս* յարուցանեն (Եղ., 103):

<sup>3</sup> Հինգերորդ դարում *կորակոր* բարդության իմաստով գործածվում է նաև *ի կոր* նախդրավոր կապակցությունը, հմմտ. Ժողովուրդք սուրբ հօտին Քրիստոսի *ի կոր* կործանեցան (Փարպ., 44):

<sup>4</sup> Աստվածաշնչում գործածված է նաև բառարմատը՝ *հեծել*՝ «հառաչել, հոգոց հանել» իմաստով: Հմմտ. *Հեծեցեն* յորժամ տեսցեն զծուխ կիզման (Յայտ., ԺԸ, 9): Ընդ իշխանութիւն ամպարշտաց *հեծեն* արդարք (Առակ, ԻԹ, 2):

**Մեծամեծ** բարդությունն Աստվածաշնչում կիրառվել է տարբեր նշանակություններով. 1. «խոշոր, շատ մեծ». Թաւալեցուցին քարինս *մեծամեծս* ի վերայ այրին (Յեսու, Ժ, 27): 2. «Նշանավոր՝ անվանի՝ պատվարժան այր». Եւ կոչեաց զՆովման ի փոքրութե մինչեւ *ցնեմամեծս* (Երեմ., ԽԲ, 8): 3. «Մաստիկ, ուժգին, անտանելի». Հարուածք *մեծամեծք* եղեն (Ա. Թագ., Դ, 17): 4. «Հզոր, սովոր, մեծաքանակ». Էին նոքա բանակք *մեծամեծք* (Ա. Մակ., Ե, 45):

Հանդիպում է բոլոր պատմիչների երկերում:

**Շեղաշեղջ** կրկնավոր բարդությունը «շեղջ-շեղջ, կուտակ-կուտակ, խիտ առ խիտ» իմաստով ունի եզակի կիրառությունն Աստվածաշնչում. Ջերդմունս եւ գղաշինս հարցն յիշատակեալ՝ *շեղաշեղջ* դիականցն անկելոց առ միմեանս՝ կացեալ ի մէջ դարեցոյց զբարկութիւն (Իմաս., ԺԸ, 23):

Որնէ պատմիչի երկում չի հանդիպում:

**Չարաչար** կրկնավոր բարդությունը հին հայերենում նշանակում է «աստիկ չար, վատթար, անտանելի, դժնդակ». գործածվում է ածականի և մակբայի արժեքներով: 1. ա. Անդ անկանէր ի *չարաչար* տանջանս, զի ամենայն ոսկերքն առհասարակ խորտակէին (Բ. Մակ., Թ, 7): 2. մկբ. Ձի մի յանգէտս վասն որոյ *չարաչարն* տանջէին՝ կորնչիցին (Իմաստ., ԺԸ, 19):

Բացի Խորենացու, Բուզանդի և Կորյունի երկերից, հանդիպում է մյուս պատմիչների աշխատություններում. *Չարաչար* հարուածովք սաստակեցին զնոսա (Եղ., 164): Որդիքն երկոքեան *չարաչար* կենօք վտանգեալ պահեն մահու (Փարպ., 60): Լուծին զնա ի *չարաչար* կապանացն (Ագաթ., 39)<sup>5</sup>:

**Վաղվաղ** կրկնավոր բարդությունն ունի «շուտ - շուտ, շուտափույթ, արագապես» իմաստներ: Հմնտ. Առաքէ զբան իւր երկիր, *վաղվաղ* ընթանան պատգամք նորա (Սաղ., ԸԽԵ, 15)<sup>6</sup>:

Հանդիպում է միայն Բուզանդի երկում. Եւ արս հաւատարիմս պատուականս յղեցին վասն *վաղվաղ* գալոյ (Բուզ., 82):

Ստորն ներկայացնում ենք համադրական կրկնավորների գործածության վիճակագրությունը՝ ըստ Աստվածաշնչի և հինգերորդ դարի պատմիչների երկերի:

Կրկնավոր բարդությունների գործածական հաճախականությունը Աստվածաշնչում բարձր տոկոս է կազմում:

<sup>5</sup> Աստվածաշնչում *չար* արմատով հանդիպում են *չարչարել* (տանջել, խոշտանգել, նեղություն՝ վիշտ պատճառել) և *չարչարանք* (տանջանք, վիշտ, ցավ, նեղություն) կրկնավոր բարդությունները (վերջինս՝ ածանցական բաղադրիչով): Հմնտ. Այժմ և զքեզ եւս *չարչարեսցուք* (Մնն., ԺԹ, 9): Մարգարէք *չարչարեսցեն* զբնակիչս երկրի (Յայտ., ԺԱ, 10): Մատուցին ի տանջանս *չարչարանացն* (Բ. Մակ., Ե, 15): Ուսաւ ի *չարչարանաց* անտի զհնազանդութիւն (Եբրա., Ե, 8):

<sup>6</sup> Այդ բարդությունից են կազմվել Աստվածաշնչում գործածված *վաղվաղակի* (անմիջապես. շուտափույթ), *վաղվաղել* (շտապել, աճապարել) և *վաղվաղուկ* (փութկոտ, անժամանակ, հեղիեղուկ, հապճեպ) և այլ բաղադրություններ: Հմնտ. Փութացոյց *վաղվաղակի* հասուցանել (Մննդ., ԺԸ, 7): Ի բան Աստծոյ երդման *մի վաղվաղիցես* (Ժող., Ը, 2): Խորհուրդ համառօտ . . . եւ ամենայն *վաղվաղուկ*՝ սակայն ի նուագութիւն (Առակ, ԲԱ, 5):

**Լիակատար արմատակրկնությունը հինգերորդ դարի հայերենում որպես բարձր ոճի դրսևորում**

	Կրկնավորներ	Ս. Գիրք	Խոր.	Ազաթ.	Եղ.	Փարպ.	Բուգ.	Եզն.	Կոր.
1.	այլայլել	+	-	-	-	-	-	-	-
2.	գոյնագոյն	+	-	+	-	-	-	-	+
3.	գեգշագեշ	+	-	-	-	-	-	-	-
4.	գունդագունդ	+	-	+	+	-	-	-	-
5.	դասադաս	+	-	+	-	-	-	-	-
6.	դարձադարձ	+	-	-	-	-	-	-	-
7.	խորխորատ	+	-	-	+	-	+	+	-
8.	կորակոր	+	-		+	-	-	-	-
9.	հեծեծել	+	-	+	+	-	-	-	-
10.	հեղեղ	+	+	+	+	-	-	-	-
11.	մեծամեծ	+	+	+	+	+	+	+	+
12.	շեղջաշեղջ	+	-	-	-	-	-	-	-
13.	չարաչար	+	-	+	+	+	-	+	-
14.	վաղվաղ	$\frac{+}{14}$	$\frac{-}{2}$	$\frac{-}{7}$	$\frac{-}{7}$	$\frac{-}{2}$	$\frac{+}{3}$	$\frac{-}{3}$	$\frac{-}{2}$

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Կրկնավոր բարդությունների գործածությունը գեղարվեստական բարձր ոճի դրսևորում է, որ հատուկ է առավելապես Սուրբ գրքին՝ որպես գեղարվեստական ոճի և պատկերավոր մտածողության կատարյալ օրինակի: Հինգերորդ դարի պատմիչների երկերում հանդիպող համատիպ կրկնավորները ևս խոսում են հեղինակների գեղարվեստական մտածողության և երկերի ոճական կատարյալ համակարգի մասին:

Սուրբ գրքում հանդիպում են անկախ արմատներով հետևյալ կրկնավորները. *այլայլել, գունագոյն, գեշագեշ, գունդագունդ, դասադաս, դարձադարձ, խորխորատ, կորակոր, հեծեծել, հեղեղ, մեծամեծ, շեղջաշեղջ, չարաչար, վաղվաղ:*



Աստվածաշնչի և հինգերորդ դարի պատմիչների երկերի միջև զուգահեռներ անցկացնելով՝ պարզել ենք, որ Աստվածաշնչում կրկնավոր բարդությունների գործառական հաճախականությունը բարձր տոկոս է կազմում:

Աստվածաշնչում գործածված 14 համադրական կրկնավոր բարդությունները հինգերորդ դարի յոթ պատմիչների աշխատություններում միասին 26 անվանական գործածություն ունեն (նկատի չունենք բնագրային գործածությունների քանակը):

Կրկնավոր բարդությունների ոճական արժեքը պամանավորված է սաստկակալություն արտահայտելու ներունակությամբ. գոյականական կրկնավորներն արտահայտում են քանակայնության գաղափար, ածականական և մակբայական կրկնավորները՝ հատկանշային իմաստի սաստկություն, բայական կրկնավորները՝ գործողության կատարման հաճախայնություն կամ բազմապատիկություն և այլն:

Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ արմատական կրկնավորների գործածությունը հինգերորդ դարում բարձր ոճի դրսևորում է, որ առավելաբար բնութագրական է Աստվածաշնչի լեզվին:

### Գրականություն

1. Աբեղյան Մ. *Երկեր*, հ. Գ, Երևան: «Հայկական ՍՍՀ ԳԱ» հրատ. : 1968: 695 էջ:
2. Աճառյան Հ. *Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների*, հ. 3, Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ.: 1957: 1011 էջ:
3. Աճառյան Հ. *Հայոց լեզվի պատմություն, Մաս II: Երևան: ԵՃ հրատ.: 2013: 624 էջ:*
4. Աղայան Է. *Ընդհանուր և հայկական բառագիտություն*: Երևան: ԵՃ հրատ.: 1984: 372 էջ:
5. Առաքելյան Վ. *Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը*, Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1984: 230 էջ:
6. *Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց*: Հայաստանի աստվածաշնչային ընկերություն: Մեծ Բրիտանիա: 1997: 1445 էջ:
7. Բագրատունի Ա. *Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց*: Սուրբ Ղազար: Վենետիկ: 1852: 744 էջ:
8. Խաչատրյան Լ., *Կախյալ արմատներով առարկա և հատկանիշ արտահայտող բառերն Աստվածաշունչ մատյանում* // ՎԵՄ Համահայկական հանդես: N 4 (72), Երևան: 2020: 124-141 էջեր :
9. Մկրտչյան Է., Խաչատրյան Լ. *Հայոց լեզվի պատմության դասընթաց. Գրային ժամանակաշրջան*, Երևան: «Զանգակ» հրատ.: 2016, 400 էջ:
10. Զահուկյան Գ. *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*: «Հայկական ՍՍՀ ԳԱ» հրատ. : Երևան: 1989: 319 էջ:
11. Туманян Э. *Древнеармянский язык*. Изд-во "Наука". Москва. 1972. 448 с..

**Բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ  
(համառոտագրություններով)**

**ա) Հինհայերենյան բնագրեր**

- Ագաթ. – Ագաթանգեղայ Պատմություն Հայոց, Տփլիս, 1909:  
Բուզ. - Փաստոսի Բիզանդացու Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1913:  
Եզն. - Եզնկայ Կողբացու Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:  
Եղ. - Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Եր., 1957:  
Խոր. - Մովսիսի Խորենացու Պատմություն Հայոց, Տփլիս, 1913: տպարանի Ի. Ն. Սկրոբիտովի,  
1887:  
Փարպ. - Ղազարայ Փարպեցու Պատմություն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, Տփլիս,  
1904:  
Կոր.- Կորին Վարք Մաշտոցի, Եր. , 1972:

**բ) Աստվածաշնչի համառոտագրություններ**

- Առակ – Առակք Սողոմոնի  
Եբրա. - Թուրք Պաղոսի Առաքելոյ առ Եբրայեցիս  
Դանի – Մարգարեություն Դանիելի  
Եզեկ.- Մարգարեություն Եզեկիելի  
Եսայ.- Մարգարեություն Եսայեայ  
Եսթ.- Եսթեր  
Երեմ.- Մարգարեություն Երեմիայ  
Թագ. - Գիրք Թագաւորութեանց Ա, Գ  
Ժող.- Ժողովօղ  
Իմաստ.- Իմաստություն Սողոմոնի  
Ծնն. – Գիրք Ծննդոց  
Մակ. Ա, Բ, Գ – Գիրք Մակարայեցուց Ա, Բ, Գ  
Յայտ.- Յայտնություն Յոհաննու  
Յեսու – Գիրք Յեսուայ որդույ Նաւեայ  
Յուդիթ – Յուդիթ  
Յոբ – Գիրք Յոբայ  
Նէմ.- Գիրք Նէմայ  
Սաղ. Գիրք սաղմոսաց Դաւթի  
Սիրաք – Գիրք Սիրաքայ

**դ) Բառարաններ**

- Առձեռն բառարան հայկազեան լեզուի (ԱԲ), երկրորդ տպագրություն, Վենետիկ, Ի Սուրբ Ղազար,  
1865:  
Համաբարբառ հին և նոր կտակարանաց, աշխատասիրություն Թադէոս վարդապետի Աստուա-  
ծատուրեան Արապկերցույ, ի տպարանի Առաքելական աթոռոյ Սրբոց Յակովբեանց, Երուսաղէմ,  
1895:  
Նոր բառգիրք հայկազեան լեզուի (ՆՀԲ), Երկասիրություն երից վարդապետաց, Գ. Աւետիքեան,  
Խ.Սիւրմէլեան, Մ.Աւգերեան, հհ. Ա-Բ, ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1836 -1837:

References

1. Abeghyan M. Works [Yerker]. v. 3, Yerevan. "Haykakan SSH GA" publ., 1968. 695p. (in Armenian)
2. Acharyan H. Complete grammar of the Armenian language compared to 562 languages [Liakatar k'erakanut'yun hayots' lezvi` hamematut'yamb 562 lezuner]. v. 3. Yerevan. "Haykakan SSH GA" publ., 1957. 1011 p. (in Armenian)
3. Acharyan H., History of the Armenian language [Hayots' lezvi patmut'yun]. v. 2, Yerevan, 2013. YU publ., 624 p. (in Armenian)
4. Aghayan E. General and Armenian vocabulary [Yndhanur yev haykakan barragitut'yun]. Yerevan: YU publ., 1984: 370 p. (in Armenian)
5. Arakelyan V. The language and style of Armenian translated literature of the fifth century [Hingerord dari hay t'argmanakan grakanut'yan lezun yev vochy]. Yerevan: 1984. "Haykakan SSH GA" publ., 230 p. (in Armenian)
6. The Bible contains the Old and New Testaments [Astuatsashunch' matean hin yev nor ktakaranats']. "The Bible Society of Armenia" publ., Great Britain. 1997. 1445 p. (in Armenian)
7. Bagratuni A. Armenian grammar according to developments [Hayerēn k'erakanutiun i pets zargats'elots'], Venetik, 1852. "St. Lazar" publ., 744 p. (in Armenian).
8. Khachatryan L. The words expressing subject and feature with dependent roots in the Holy Bible [Kakhyal armatnerov arrarka yev hatkanish artahaytogh barrern Astvatsashunch' matyanum]//VEM Hamarmenian journal, Yerevan: 2020. N 4 (72), pp. 124-141. (in Armenian)
9. Mkrtchyan E., Khachatryan L. History of the Armenian language course. Literary period [Hayots' lezvi patmut'yan dasynt'ats'. Grayin zhamanakashrjan]. Yerevan: "Zangak" publ., 2016, 400 p. (in Armenian)
10. Jahukyan G. The semantics and word formation of Modern Armenian [Zhamanakakits' hayots' lezvi imastabanut'yun ev barakazmut'yun], Yerevan. "Haykakan SSH GA" publ., 319 p. (in Armenian)
11. Tumanyan E. Ancient Armenian language [Drevnearmyanskiy yazyk]. "Nauka" publ.. Moscow. 1972. 448 p. (in Russian)

Ընդունվել է / Принята / Received on: 18.03.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 02.04.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 10.06.2023

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Լայիկ Մնացականի ԽԱՉԱՏՐՅԱՆ**, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ, ՀՀ, էլ. huuqե. [lingualal51@mail.ru](mailto:lingualal51@mail.ru) <https://orcid.org/0000-0002-2107-6210>

**Лалик Мнацаканович ХАЧАТРИАН**: доктор филолог. наук, профессор заведующий лаборатории лингвистических исследований АГПУ им. Х. Абовяна, РА, эл. адрес: [lingualal51@mail.ru](mailto:lingualal51@mail.ru), <https://orcid.org/0000-0002-2107-6210>

**Lalik Mnazakan KHACHATRYAN**: Doctor of Philology, Professor Head of Linguistics Research Laboratory of ASPU after Kh. Abovyan, RA, e-mail: [lingualal51@mail.ru](mailto:lingualal51@mail.ru), <https://orcid.org/0000-0002-2107-6210>